

## Հաշվետվություն

2018 թվականի 25-ից 28-ը հունվարի Թաիլանդի Թագավորություն (ք.Բանգկոկ)՝  
Բազմաբնույթ աղետների վաղ նախազգուշացման միասնական տարածաշրջանային  
համակարգի (RIMES) աշխատանքային հանդիպման մասնակցության

### 1. Անունը, ազգանունը.

Դավիթ Կարապետյան

### 2. Ձբաղեցրած պաշտոնը.

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ

### 3. Գործուղման վայրը և ժամկետները.

Թաիլանդի Թագավորություն (ք.Բանգկոկ), 25.01.2018թ. – 28.01.2018թ.

### 4. Հրավիրող կողմը.

“Բազմաբնույթ աղետների վաղ նախազգուշացման միասնական  
տարածաշրջանային համակարգ” (RIMES) ծրագրի տնօրեն

### 5. Գործուղման նպատակը.

Մասնակցություն Բազմաբնույթ աղետների վաղ նախազգուշացման միասնական  
տարածաշրջանային համակարգի (RIMES) աշխատանքային հանդիպմանը

### 6. Քննարկված թեմաները.

Քննարկվեցին Հայաստանում հիդրոօդերևութաբանական վտանգավոր  
երևույթների վաղ նախազգուշացման համակարգի բարելավման  
Գործողությունների ծրագրի (2018-2023թթ-ի համար) մշակման, ինչպես նաև  
RIMES-ի և ՀՀ ԱԻՆ Հիդրոմետ ծառայության միջև համագործակցության  
ընդլայնման հարցերը:

Քննարկվեցին ՀՀ ԱԻՆ Հիդրոմետ ծառայության եղանակային  
կանխատեսումների և հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների  
վաղ նախազգուշացման համակարգերի արդիականացման,  
հիդրոօդերևութաբանական և կլիմայական կանխատեսումների բարելավման,

ագրոօդերևութաբանական խորհրդատվական համակարգերի ներդրման, կլիմայական տեղեկատվական և կլիմայական ռիսկերի կառավարման համակարգերի բարելավման հարցերը:

**7. Հանդիպումները, ելույթները, բարձրագույն կամ քննարկված հարցերը.**

Քննարկվեց նաև միջազգային դոնոր կազմակերպությունների աջակցությամբ համատեղ ծրագրերի իրականացման հնարավորությունը:

**8. Հանդիպման ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

- Բազմաբնույթ աղետների վաղ նախազգուշացման միասնական տարածաշրջանային համակարգի կողմից մշակվելու և փորձարկվելու է Հայաստանի եղանակային կանխատեսումների վերջին սերնդի մոդել, որի միջոցով ներկայիս 9x9կմ լուծաչափի փոխարեն կիրականացվի 3x3կմ լուծաչափով օդերևութաբանական տարրերի կանխատեսումներ՝ հնարավորություն տալով իրականացնել կանխատեսումներ ըստ մարզերի ու համայնքների:

- Բազմաբնույթ աղետների վաղ նախազգուշացման միասնական տարածաշրջանային համակարգի կողմից Երևանում ս.թ. ապրիլի 3-ին կազմակերպվելու է ագրոօդերևութաբանական ֆորում, որի ընթացքում արտասահմանյան փորձագետները Հիդրոմետ ծառայության մասնագետների և արգոօդերևութաբանական տեղեկատվության սպառողների հետ կքննարկեն Հիդրոմետ ծառայության արգոօդերևութաբանական ծառայությունների բարելավման և միջազգային առաջադեմ փորձի ներդրման հնարավորությունները՝ նպատակ ունենալով արգոօդերևութաբանական դիտարկումների և խորհրդատվության համակարգը դարձնել սպառողների կարիքներին առավել համահունչ:

- Բազմաբնույթ աղետների վաղ նախազգուշացման միասնական տարածաշրջանային համակարգի աջակցությամբ ՀՀ ԱԻՆ Հիդրոմետ

ծառայությունում ներդրվելու է Ագրոօդերևութաբանական խորհրդատվական և Վարարումների կանխատեսման համակարգերը:

**9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Հիդրոմետ ծառայության և Բազմաբնույթ աղետների վաղ նախազգուշացման միասնական տարածաշրջանային համակարգի միջև համագործակցությունը կանոնավոր հիմքերի վրա դնելու նպատակով նախատեսվում է մշակել և գարնանը հաստատել Գործողությունների ծրագիրը (2018-2023թթ-ի համար):

**10. Գործուղվողը.**

Դավիթ Կարապետյան

**11. Ստորագրությունը, ամսաթիվը**

30/01/2018թ.

